



ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՈՒՄՈՒՍՆԱԽՐՈՒԹՅՈՒՆ

Մանուկ Աբեղյանի «Բայի եղանակներն արևելահայ աշխարհաբարում» հոդվածը, որ տպագրվել է 1912 թ. «Արարատ» ամսագրի 2-րդ ու 3-րդ համարներում և երբեք չի վերահրատարակվել (դժբախտաբար, այն տեղ չի գտել անգամ մեր օրերում հրատարակված «Երկեր»-ում), գիտական մեծ կարևորություն է ներկայացնում բայի եղանակների մասին նրա մշակած տրամաբանական կուռ տեսությունը՝ զարգացման ընթացքով, ճիշտ ըմբռնելու և գործնականում էլ ճշտորեն կիրառելու համար:

Չիշյալ հոդվածը, որ ներկայումս վերահրատարակվում է մեծանուն հայագետի ծննդյան 135-ամյակի առիթով (Ս. Աբեղյանը ծնվել է 1865 թ. մարտի 5-ին), նրա «Աշխարհաբարի քերականություն» (Վաղ-պատ, 1906) և «Աշխարհաբարի շարահյուսություն» (Վաղ-պատ, 1912) աշխատությունների միջին օղակն է կազմում և, իբրև այդպիսին, ոչ միայն հայոց լեզվի բայի եղանակների արեղյանական տեսության զարգացման ընթացքն է յուրովի ուրվագծում, այլև ակներև դարձնում, թե ինչով է զնահատվում ու արժեքավորվում այն:

Լեզվական հարուստ փաստերի հիման վրա ուսումնասիրելով արևելահայ աշխարհաբարի կամ արևելահայ գրական լեզվի բայի եղանակները՝ Ս. Աբեղյանը նախ նշել է, որ բայերի խոնարհումը դժվար է յուրացվում և ապա՝ դա բացատրել թե՛ բայական ձևերի շատությամբ և թե՛ «այդ բարդ նյութը» «անմշակ ձևով երեխաներին ավանդելու» իրողությամբ:

Ի պատիվ Ս. Աբեղյանի, պետք է ասել, որ հենց ինքն էլ հիմնավորապես մշակել, խտակորեն լուսարանել է «այդ բարդ նյութը» և փիլիսոփայական-տրամաբանական հիմունքներով ապացուցել, որ արևելահայ աշխարհաբարի բայի եղանակները ոչ թե, ինչպես ընդունված էր, երեքը, այլ հինգն են՝ սահմանական, ենթադրական, հարկադրական, հրամայական, ըզծական, որ դրանք որոշվում են գործողության չորս կատարվող, կատարված, կատարելի և պարզ կերպերով, որ բայի եղանակների ժամանակները հարաբերակցվում են ներկա ու անցյալ ժամանակակետերի հետ և ըստ այդմ էլ իրար հետ սերտորեն կապված ու իրար հանդիպակադրվող գործողություններ են ցույց տալիս, որ բայի եղանակները հատկանշվում են զլխավոր ու երկրորդական պարզ և բաղադրյալ ժամանակներով, որոնք և միասին մեծապես հարստացնում են բայի խոնարհման համակարգը:

Դրանցից բացի, ինչպես ընթերցողն էլ կարող է պարզորոշ նկատել, Ս. Աբեղյանը իր այդ հոդվածում գտնելով, որ բայի եղանակներով կազմվում են երկու կարգի՝ թե՛ դատողության և թե՛ ցանկության խոսքեր, ա) որոշ լեզուների (հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, ռուսերեն, գերմաներեն) բայական իրողությունների համեմատությամբ ընդհանուր լեզվաբանական մեկնաբանություններ է կատարել. բ) հայերենի բայի եղանակների ու դրանց ժամանակների թե՛ կազմությունը և թե՛ կրած պատմական փոփոխություններն է պատկերել և այդպիսով ամուր հիմքեր ստեղծել «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ արևելահայ աշխարհաբարի բայի եղանակները, ժամանակները և կերպերը ավելի՛ խոր գիտականությամբ, ավելի՛ կուռ ու ամփոփ ներկայացնելու համար (տե՛ս Ս. Աբեղյան, Գայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 557-600):

Անշուշտ, այդ առումով ևս կարևորվում է Ս. Աբեղյանի «Բայի եղանակները արևելահայ աշխարհաբարում» հոդվածի վերահրատարակությունը*, որ ընթերցողներին է ներկայացվում ժամանակակից հայոց լեզվի արդի ուղղագրությամբ և մասնակի շտկումներով. ուղղված են տպագրական վրիպակները, դյուրության նկատառումով շղատառ են տրվում բայի եղանակաժամանակային ձևերի համար բերված՝ չընդգծված օրինակները:

Ամփոփելի է նաև, որ այն իր հերթին լավագույն աղբյուր կարող է ծառայել հայոց լեզվի բայի եղանակների ոչ միայն արեղյանական տեսությունը, այլև նրանց բնույթն ու էությունը ճշտորեն ըմբռնելու ու զնահատելու համար:

ԱԼ. Ս. ՄԱՐԿԱՐՅԱՆ

* Դարկ է շնորհակալությամբ նշել, որ դրան զգալապես աջակցել է Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր, ակադ. է. Վ. Զուբարյանը:

Աշխարհաբարի ուսուցիչները փորձով գիտեն, որ աշակերտները մեր լեզվի ձևաբանության ուսուցումից դժվար յուրացնում են բայերի խոնարհումը: Դրա առաջին պատճառն այն է, որ մեր քայական ձևերը, եթե բաղադրյալ կոչված ժամանակներն ևս առնվեն, թվով բավական շատ են. նյութի մեծությունն ու բարդությունն ուրեմն ըստ ինքյան դժվարություն է պատճառում: Երկրորդ և զլխավոր պատճառը սակայն, իմ կարծիքով, այն է, որ այդ բարդ նյութն անմշակ ձևով է ավանդվում երեխաներին:

Ով երբևէ զբաղվել է մեր բայերի խոնարհման խնդրով, նկատած կլինի այն անբավարար դրությունը, որ կա Պալասանյանի քերականության մեջ և որին այս կամ այն չնչին փոփոխություններով հետևում են ընդհանրապես ուրիշները: Դրանք բաղադրյալ ժամանակների հետ վարվում են քմահաճորեն. ուզած ձևերն առնում են խոնարհման մեջ, չուզածները դուրս են ձգում և այս անում են առանց որևէ հիմունքի: Ամհասկանալի է մնում, օրինակ, թե ինչ արտոնությամբ խոնարհման մեջ իբրև առանձին ժամանակներ մտել են՝ կարդացել եմ, կարդացել էի, և արհամարհված, դուրս են ձգված մնան կազմության ձևերը՝ կարդալու եմ, կարդալու էի. կամ ինչու պիտի սովորել իբրև «ապառնի բաղադրյալ» ձև՝ կարդացած կլինի, և չպիտի սովորել կարդալիս կլինի ձևը:

Մի անգամ, որ բաղադրյալ ժամանակներն առնվում են խոնարհման մեջ, թույլատրելի չէ այսպես քմահաճությամբ վարվել. ամեն այսպիսի վարմունք անպայման պիտի անդրադառնա աշակերտի մտքի վրա և նրա ուսման հետևանքը պիտի լինի ոչ թե այն, որ մեր լեզվի քայական ձևերի մասին պարզ հասկացողություն կազմի, այլ միայն խառնաշփոթություն:

Արդարև մեր բոլոր բաղադրյալ ժամանակները խոնարհման մեջ առնելը հեշտ չէ, որովհետև դրանք թվով այնքան շատ են, որ նույնիսկ առանձին հորջորջումներ գտնելը և դասավորելը դյուրին բան չէ. բայց պետք է հաղթել այդ դժվարությունը և խոնարհման մի այնպիսի դրություն հորինել, որ՝

1. Բոլոր ձևերը, պարզ ու բաղադրյալ, իր մեջ ամփոփի.
2. Գործածված տերմինները, հորջորջումները, ոչ միայն սակավաթիվ լինին, մտքում հեշտ պահելու համար, այլև հարմար լինին ձևերի նշանակությանն ու կազմությանը, այսինքն հորջորջումներով միայն կարելի լինի հասկանալ ձևերի կազմությունն ու զլխավոր նշանակությունը: Եվ որ զլխավորն է՝
3. Պարզ ժամանակներն ու դերբայներն իմանալուց հետո՝ աշակերտն ինքը կարողանա թուր բաղադրյալ ձևերը կազմել և անվանել:

Այսպիսի մի դրության համար հարկավոր է ամենից առաջ ճիշտ որոշել մեր բայերի եղանակներն ու ժամանակները:

Ջանի՞ եղանակ կա մեր խոնարհման մեջ և հատկապես ո՞ր եղանակները:

Բայի եղանակները բաժանվում են երկու խմբի, առաջին՝ եղանակներ, որոնցով կազմվում են դատողության խոսքեր, երկրորդ՝ եղանակներ, որոնցով կազմվում են ցանկության խոսքեր (Begehrungssatz, որթառօջոսե չթառս):

Դատողության եղանակներն երեք են, համապատասխան Կանտի՝ կատեգորիաների մեջ տրամաբանական դատողության համար դրած երեք եղանակավորություններին, որ են՝ սսերտորիկ (հաստատական, իրական), պրորլեմատիկ (առեղծվածային, երկբայելի, խնդրական) և ապրոդիկտիկ (անիրաժեշտ):

Ասերտորիկ դատողությունն արտահայտում է իրականություն, իրոք գոյություն ունեցող եղելություն. դրան համապատասխան է քերականության մեջ սսածանական եղանակը, որ իրականության եղանակն է (modus realis): Դրանով արտահայտված եղելությունը իրապես գոյություն ունի, եթե միայն իհարկե խոսողը չի սխալվում, կամ սուտ խոսում:

Պրորլեմատիկ դատողությունը ոչ թե եղելության իրականությունն է հայտնում, այլ կարելիությունը, հնարավորությունը. եղելությունը կարող է հավասարապես և՛ լինել, և՛ չլինել: Խոսողը միայն ենթադրում է եղելությունը: Քերականության մեջ այս եղանակավորությամբ համապատասխան դնում են հնարավորության կամ կարելիության եղանակ (modus potentialis), որով եղելությունը ներկայացվում է պարզապես իբրև մտածված, ենթադրված, հնարավոր. այսինքն այնպիսի, որ կարող է լինել, կարելի է որ լինի:

Իսկ ապրոդիկտիկ դատողությունը ցույց է տալիս գործողության անիրաժեշտություն. դրա համապատասխան է քերականության մեջ անիրաժեշտության կամ հարկադրության եղանակը (modus necessitatis), որով գործողությունը անհնար է այլ կերպ ըմբռնել, քան ինչպես որ ըմբռն-

նում ենք մեր մտածողության օտենքների հիման վրա: Օրինակ՝ Լա այժմ հասել է տուն և այս րուպեիս տանն է, - իրական եղելություն է: Լա այժմ հասած կլինի տուն և այս րուպեիս տանը կլինի, - կարելի, հնարավոր եղելություն է: Իսկ նա այժմ հասած պիտի լինի տուն և այս րուպեիս տանը պիտի լինի, - անհրաժեշտորեն այդպես ենք մտածում:

Այս երեք եղանակավորությունը բոլոր լեզուների մեջ ևս իհարկե գոյություն ունի, որովհետև հիմնված է տրամաբանական անհրաժեշտության վրա, բայց դրանց արտահայտության ձևը լեզուների մեջ միակերպ չէ, մասնավաճող կարելիական և հարկադրական եղանակներինը: Ուստի փոքր ինչ ավելի երկար կանգ առնենք այս կետի վրա, որ մեր քերականությունների մեջ ուշադրության չի առնվում:

Շատ լեզուների մեջ կարելիական և հարկադրական եղանակների համար չկան հատուկ բառաձևեր, այսինքն բայի մի առանձին ձևով չի արտահայտվում անհրաժեշտություն կամ կարելիություն, ինչպես են օրինակ՝ սահմանական և հրամայական եղանակները: Օրինակ երբ ասում ենք *գնացի՞ք, գնացե՞ք*, բայի ձևերն արդեն ցույց են տալիս, որ բայիմաստն առաջին դեպքում իբրև իրական եղելություն, իսկ երկրորդ դեպքում իբրև հրաման վերագրվում է բայի դեմքին: Այսպիսի մի ձև, որ մի բառով, բայի կազմությամբ արդեն արտահայտվեր անհրաժեշտ հարկ ու պետք կամ հնարավորություն, չկա և մեր լեզվի մեջ: Եվ այս զարմանալի չպիտի լինի, որովհետև տրամաբանական և քերականական կատեգորիաները միշտ էլ իրար հավասար չեն:

Դատողությունը ինչպես շատ լեզուների մեջ, նույնպես և հայերենում կարելիական կամ հարկադրական բնավորություն է ստանում, երբ բայի վրա ավելանում է մի բառ կամ մասնիկ, որ ցույց է տալիս հնարավորություն կամ անհրաժեշտություն, կամ թե անորոշ դերբայը դրվում է իբրև խնդիր այնպիսի բայերի, որոնք նշանակում են կարողանալու, կարելի, հնարավոր լինելու, կամ պարտավոր լինելու, անհրաժեշտորեն ստիպված լինելու գաղափար: Դրանք եղանակական կամ եղանակիչ բառեր, մասնիկներ կամ բայեր են, որոնք դրվելով բայի վրա՝ նոր եղանակի նշանակություն են տալիս նրան:

Գրաբարի սովորական եղանակիչ բայերն են կարելիության իմաստով՝ կարե՛մ, մարթե՛մ, մարթի, մարթ է (գերմաներեն *können, dürfen, mögen*), իսկ հարկադրության իմաստով՝ պարտե՛մ, պարտ է, հարկ է, պիտի (գերմ. *müssen, sollen*): Այդ բայերի սահմանական եղանակի հետ անորոշ դերբայը ստանում է կարելիական կամ հարկադրական եղանակի նշանակություն: Երբ ասում ենք՝ նա կարե՛ գալ, նա կարող է գալ, հաստատվում է նրա կարողանալու իրականությունը. բայց կարե՛մ բայն իբրև լրացում ունի գալ, ուստի և այդ խոսքով հաստատվում է նրա գալ կարողանալը. և որովհետև կարե՛մ բայը ինքը կարելիություն, հնարավորություն է ցույց տալիս, ուստի և միանգամայն նրա գալը հաստատվում է իբրև կարելի, հնարավոր: Տրամաբանորեն ուրեմն՝ այդ խոսքը՝ նա կարե՛ գալ, կամ մարթե՛ գալ, նմա մարթ է գալ, - կարելիական խոսք է, իսկ քերականորեն դա մի սահմանական խոսք է:

Եւոյնպես տրամաբանորեն ապոդիկտիկ խոսք է նա պարտի գալ, նմա պարտ է գալ, նմա հարկ է գալ, որ ցույց են տալիս թե գալու անհրաժեշտությունը կա նրա համար: «Լա պարտի գալ» խոսքը սակայն թե իմաստով հարկադրական է, քերականական ձևով սահմանական է. «Պարտիլը նրա համար ճիշտ նույնպես իբրև իրական եղած է ասվում, ինչպես թռչունն թռչի խոսքի մեջ թռչելը թռչնի համար: Ճիշտ է իհարկե, որ երբ մեկը պարտի գալ, գալն էլ անհրաժեշտորեն վերագրվում է նրան», բայց դա քերականական ձևով չի արտահայտվում, այլ մի հետևություն է միայն: «Լա պարտի գալ և նա կարե՛ գալ» խոսքերը նշանակությամբ խոշոր տարբերություն ունին, որ առաջանում է պարտի՛մ և կարե՛մ բայերի իմաստից, բայց քերականորեն այդ երկու խոսքն ևս միևնույն կազմությունն ունին [սահմանական են] և ոչ մի քերականական զանազանություն չի կարելի դնել դրանց մեջ այն պատճառով, որ բայերը պարտի՛մ և կարե՛ տարբեր են, ինչպես որ ոչ մի տարբերություն չի դրվում, երբ ենթակաները փոխվում են»:¹

Հաճախ այս երկու եղանակավորությունը կարելի է արտահայտել բայի վրա որևէ եղանակական մակբայական լրացում դնելով, օրինակ՝ նա գալիս է իրական խոսք է, իսկ նա գուցե գալիս է, նա թերևս գալիս է, նա կարելի է գալիս է կարելիությամբ ասված խոսքեր են. իսկ նա անպայման գալիս է, նա անհրաժեշտորեն գալիս է - ունին անհրաժեշտության իմաստ, թեպետև րոլոր դեպքերում գալիս է սահմանական եղանակ է:

Ինչպես որ գրաբարում ես պարտի՛մ գնալ, դու պարտի՛ս գնալ, նա պարտի՛ գնալ և այլն, կամ ինձ մարթի՛ գնալ, քեզ մարթի՛ գնալ և այլն, ձևով սահմանական են, իսկ նշանակությամբ

¹ F. Kern. *Die Deutsche Satzlehre, zweite Auflage, bp. 20-23:*

հարկադրական կամ կարելիական են, նույնպես իհարկե և աշխարհաբարում՝ ես պարտավոր եմ գնալ, դու պարտավոր ես գնալ, նա պարտավոր է գնալ և այլն, կամ՝ ես կարող եմ գնալ, դու կարող ես գնալ, նա կարող է գնալ: Նույն կերպ նաև մեր քարթումներում սահմանական եղանակով հարկադրական եղանակի իմաստ է արտահայտվում, երբ առում են՝ ես պետք եմ գնալ, դու պետք ես գնալ, նա պետք է գնալ և այլն. կամ ես պիտիմ գնալ, դու պիտիս գնալ, նա պիտի գնալ, մենք պիտիք գնալ և այլն, կամ պիտիմ բայի փոփոխությամբ՝ ես 'տեմ (= պտեմ) գնալ, դու՝ 'տես գնալ, նա 'տի գնալ, մենք 'տենք գնալ, դուք 'տեք գնալ, նրանք 'տեն գնալ, կամ հետադաս՝ ես գնալ 'տեմ (=պտեմ), դու գնալ 'տես, նա գնալ 'տի և այլն: Այս բոլոր դեպքերում բայը սահմանական եղանակ է, թեպետ ամբողջ խոսքն իմաստով հարկադրական է:

Բայց մենք ունինք նաև պիտի գնամ, պիտի գնաս, պիտի գնա և այլն, և կգնամ, կգնաս, կգնա և այլն: Այժմ հարց է. եթե այս կազմություններն առնվում են խոնարհման մեջ, ո՞ր եղանակի մեջ պիտի դրվին, սահմանականնի՞ մեջ, թե՞ իբրև առանձին եղանակներ:

Պիտի գնամ ձևն անպայման անհրաժեշտություն է ցույց տալիս, անհրաժեշտությունն իբրև անհրաժեշտ հարկ ու պետք, պարտք, ստիպմունք բարոյական պարտքից, բնությունից, դրությունից և այլն, կամ թե տրամաբանական անհրաժեշտություն, որ հիմնված է մեր խելքի, դատողության վրա: Թե պիտի գնամ ձևն ապոդիկտիկ, հարկադրական խոսք է և ոչ թե ասերտորիկ, իրական, դրան համոզվելու համար՝ բավական է առնել մի քանի խոսքեր, որոնք կազմվում են գրաբարում պարտում, պարտ է, հարկ է բայերով, կամ օտար լեզուների մեջ müssen, sollen, devoir, առաջ և այլ բայերով, և դարձնել աշխարհաբար. այդ հարկադրությունը մենք արտահայտում ենք պիտի (պետք է) գնամ ձևով: Օրինակ՝ պարտիմք զմիմեանս սիրել - մենք պարտավոր ենք միմյանց սիրել, - մենք պիտի միմյանց սիրենք: Առն մարդոյ չէ պարտ ծածկել զգլուխ իւր - տղամարդը զուխը չպիտի ծածկի: Un homme d'honneur doit tenir sa parole, ազնիվ մարդը իր խոսքը պիտի կատարի: Vous devriez vous conduire autrement, դուք պիտի ուրիշ կերպ վարվեիք: A la vie que mène cet homme, il doit être bien riche, իր վարած կյանքին նայելով՝ այս մարդը պետք է շատ հարուստ լինի (նույնպես թարգմանած է Նուպարյանի բառարանի մեջ): Tous les hommes doivent mourir, բոլոր մարդիկ պիտի մեռնին (նույնպես և Նուպարյան): Je dois aller à la campagne, ես գյուղ պիտի երթամ (նույնպես և Նուպարյանն է թարգմանած): On se doit à soi-même de respecter... Մարդս իր պատվի համար պետք է հարգի... (նույնպես թարգմ. և Նուպարյան):

Այսպես և զերմաներենի sollen, որ բարոյական պարտք է ցույց տալիս, müssen, որ տրամաբանական անհրաժեշտություն է նշանակում, թարգմանվում են պիտի, պետք է ձևով. օրինակ՝ Wir sollen Gott mehr gehorchen, als den menschen մենք Աստծուն ավելի պիտի (պետք է) լսենք, քան մարդկանց: Ich muss über Nacht sehr fest geschlafen haben, denn ich habe nichts von dem Gewitter gehört գիշերն ես շատ խորք քնած պիտի լինիմ, քանի որ փոթորիկը չեմ իմացել:

Օրինակներ շատ բերելն ավելորդ եմ համարում. պիտի (պետք է) բառով կազմված ձևերի անհրաժեշտական նշանակությունը շատ պարզ է*:

Ի՞նչ եղանակ է կը մասնիկով կազմությունը՝ կը գնամ, կը գնաի, գնացած կը լինիմ, գնացած կը լինեի և այլն, արդյոք սահմանական, թե՞ մի առանձին եղանակ:

Պալասանյանն այս երկու նույն կազմությունն և, ինչպես կտեսնենք, նույն եղականավորությունն ունեցող ձևերից առաջինները կը գնամ, գնացած կը լինիմ՝ դրել է իբրև սահմանական, իսկ անցյալը՝ կը գնաի, գնացած կը լինեի ֆրանս. քերական. ազդեցության տակ դրել է իբրև պայմանական, բացատրելով, թե «պայմանական եղանակը խոսքը պայմանի տակ է դնում, հայտնելով թե գործողությունը կարող էր կատարվել, բայց մի որևիցե պատճառով չի կատարվել»: Օրինակ՝ «ես գիրք կը կարդաի, եթե ժամանակ ունենայի» ասացվածի մեջ պայմանական եղանակն է «կը կարդաի», իսկ պայմանը, «որի տակ դրվում է» այդ խոսքը, է «եթե ժամանակ ունենայի»: Պայմանական եղանակ հորջորջումն ուրեմն առնվում է պայման ունեցող, պայմանավորված նշանակությամբ:

* Հարկավոր է շեշտել, սակայն, որ խոսքն այստեղ արևելյան աշխարհաբարի մասին է:

Արևմտյան աշխարհաբարը փոքր ինչ տարբերվում է արևելյանից. այնտեղ պիտի գնամ ձևն երբեմն առնվում է իբրև սահմանական ապառնի, միևնչյեռ մեր սահմ. ապառնին՝ գնալու եմ սովորաբար հարկադրական նշանակություն ունի: Օրինակ՝ il doit être riche. նա հարուստ պիտի լինի, Նուպարյանի բառարանի մեջ թարգմանած է՝ նա պետք է հարուստ լինի, այլև հարուստ լինելու է: On devrait planter des arbres ici, այստեղ ծառեր պետք է տնկեին, Նուպարյանը թարգմանած է՝ ծառեր տնկելու էր: երբեմն արևելյան աշխարհաբարի մեջ ևս վերջին ձևն, անենթակա նշանակությամբ, իբրև հարկադրական է գործ ածվում, բայց այդ միայն արևմտյան աշխարհաբարի ազդեցության տակ, արևելյան աշխարհաբարի մեջ պիտի գնամ հարկադրական է, իսկ գնալու եմ սահմանական, - ինչպես որ սահմանական են և համապատասխան կազմության ձևերը՝ գնում եմ, գնացել եմ. և եթե հանգ. Ֆինկն. օրինակ, արևելյան աշխարհաբարի քերականության մեջ իբրև հարկադրական եղանակ դնում է գնալու եմ, գնալու ես և այլն, դա միայն հետևողություն է Այտնյանի քերականության:

Եթե կը կարդայի ձևն իբրև «պայմանական եղանակ» է դրվում նրա համար, որ դա գործ է ածվում պայմանավորված նշանակությամբ, ինչը՝ կը կարդամ ձևը նույնպես չպիտի դրվի իբրև պայմանական, քանի որ դա ևս նույնչափ իբրև պայմանավորված խոսք է գործածվում, որչափ և «կը կարդայի» ձևը. ես գիրք կը կարդայի, եթե ժամանակ ունենայի. ես գիրք կը կարդամ, եթե ժամանակ ունենամ: Բացի այդ «կը կարդայի» ձևն անպատճառ միշտ պայմանավորված խոսք չի կազմում, որ դրվի իբրև պայմանական եղանակ. այլ դա ևս մենակ, առանց որևէ պայմանի, գործ է ածվում, ինչպես և կը կարդամ ձևը:

Այս երկու ձևերը կը գնամ, գնացած կը լինիմ և կը գնայի, գնացած կը լինեի՝ ոչ իրենց կազմությամբ են միմյանցից տարբերվում և ոչ իրենց եղանակով. դրանց տարբերությունը միայն ժամանակով է, ինչպես և նույն կազմությունն ունեցող մյուս ձևերը՝ գնամ, գնայի. գնում եմ, գնում էի. գնացել եմ, գնացել էի – ոչ թե եղանակով են իրարուց տարբերվում, այլ միայն ժամանակով: Ուստի եթե կը գնամ ձևը սահմանական է դրվում, նույնպես պիտի դրվի և կը գնայի ձևը, և ընդհակառակն, եթե կը գնայի պայմանական է, նույնը պիտի լինի և կը գնամ ձևը:

Ես սակայն մեր այս կը մասնիկով կազմությունը ոչ սահմանական եմ համարում և ոչ պայմանական, այլ մի կարելիական կամ ենթադրական եղանակ. կամ լավ ևս՝ ըղծական եղանակ կարելիական նշանակությամբ: Ուստի առաջ տեսնենք ըղծական եղանակը:

Ցանկության խոսքերը ցույց են տալիս կամք ու ցանկություն, հրաման կամ արգելք, կամ թե հորդոր, դրդում, խնդիր, մաղթանք, իղծ մի բան անելու: Լեզուների՝ մեջ ցանկության խոսքերի համար կա մի հատուկ եղանակ հրամայականը. հունարենը բացի դրանից ունի նաև ըղծական եղանակը (modus optativaus): Կա՞ արդյոք մեր աշխարհաբարում բացի հրամայականից մի ուրիշ բայական ձև հատուկ ցանկության խոսքեր կազմելու համար:

Պալասանյանը մեր գնամ, գնայի ձևերը դրել է իբրև ստորադասական եղանակ: Այսպես կոչվում է, որովհետև «ստորադասականով բայը միշտ ենթարկվում է, ստորադասվում է մի ուրիշ բայի, լինի վերջինս խոսքի մեջ արտահայտված թե գործությամբ հասկացված, որ հարկավոր է մի տրամաբանական միտք արտահայտելու համար»: Ուրիշ խոսքով ստորադասական եղանակը կազմում է ոչ թե գլխավոր կամ անկախ խոսք, այլ երկրորդական խոսք: Ֆրանսերենում, օրինակ, *subjonctif* ստորադասական եղանակը անկախ կամ գլխավոր խոսք չի կազմում, բացի մի երկու բայից կամ մի երկու կիրառությունից, այն էլ երբեմն դարձյալ զսօ որ շաղկապով սկսված, այնպես որ այս դեպքում էլ *ֆրանսերենի* ստորադասականն ըմբռնվում է դարձյալ իբրև խնդիր մի գեղչված բայի: Այս պատճառով և *ֆրանսերենի* քերականությունների մեջ այս եղանակի սկզբում դրվում է որ – որ, թե շաղկապը: Նման ձևով և Պալասանյանը մեր «ստորադասականի» առաջ դնում է որ շաղկապը, կարծես թե այս շաղկապն անհրաժեշտ լինի մեր այս եղանակն ըմբռնելու համար: Սակայն այդ ճիշտ չէ. հայերենի գնամ, գնայի ձևերը թե անկախ ու գլխավոր խոսքեր են կազմում և թե երկրորդական. գնամ, տեսնեմ նրան. Աստված հոգին լուսավորե. գնացի, որ տեսնեմ նրան:

Մյուս կողմից մեր այս եղանակն իր նշանակությամբ համապատասխան չէ նաև լատիներենի ու հունարենի *coniunctivus* շաղկապական եղանակին, որ թե դատողության և թե ցանկության խոսքեր են կազմում. մեր գնամ, գնայի ձևերը միշտ ցանկության խոսքեր են կազմում և երբեք դատողության խոսքեր:

Տեսնենք նախ մեր այս եղանակի գործածությունները լատիներենի և հունարենի ցանկության խոսքեր կազմող ձևերի համեմատությամբ: Տպագրության հարմարության համար միայն մենք կխուսափենք լատիներեն կամ հունարեն օրինակներ մեջ բերելուց, այլ կբավականանանք քերականությունների մեջ ընդունված սովորական հորջորջումները հիշելով:

1. Լատ. *conj. optativus* եղանակը և հունարեն *optativus* ըղծական եղանակը ցույց են տալիս տեսչանք, փափագ մի բան անելու. հետն ունին հաճախ մի ցանկություն ցույց տվող բառ, ինչպես և հայերենում երանի, գեթ, գոբարսր՝ *իցի՞, օ՞չ թե՛* և այլն: Այս գործածությունը, ինչպես և հունարենում ու լատիներենում, շատ սովորական է երզումների, օրհնությունների, անեծքների, բարեմաղթությունների և ալնի մեջ, ինչպես բարով վայելես, գօբաբաս, Աստված կյանք տա, գետիկը մտնես, գլուխս մեռնի թե... ես մեռնիմ թե... Եթե ցանկությունն անհրագործելի է, դրվում է անցյալ ժամանակով (հունարեն *praeteritum* առանց *av* մասնիկի). ինչպես՝ Ախ, ես երանի կայծակ լինեի, որոտ ճայթյունով մռայլ ամպերից թռչեի վերև, զարկեի ուժգին և պատառեի կամարն երկնքի, ցույց տայի երկրին գաղտնիքը վերին (Գովի. Թում.):

2. Լատ. և հուն. *conj. hortativus* հորջորդական, որ գործ է ածվում դրդում, խնդիր և հրաման ցույց տալու համար, ուստի և կոչվում է նաև երբեմն *conj. imperativus* հրամայական, գերմաներեն քերականությունների մեջ երբեմն նաև պարզապես ըղծական. հայերենում շատ գործածական է բոլոր դեմքերի համար թե ներկա և թե անցյալ. Գնամ, տեսնեմ նրան: Գիրքդ տաս ինձ: Գնանք, հիշենք: Գնանս, ասես նրան, որ գա ինձ մոտ, մի գնայիր, նրան ասեիր, որ գա ինձ մոտ: Այսպես և երբ հրամայականով ասած անենթակա խոսքերն ենթակայական ձևով են արտահայտվում, հրամա-

յականը փոխվում է ըղձականի և երկրորդ դեմքի տեղ դրվում է երրորդ դեմք, ինչպես՝ «Կեր փորձած թանը, մի՛ ուտիլ անփորձ մածունը», «Մարդ ուտի փորձած թանը, չուտի անփորձ մածունը»:

3. Լատ. *conj. prohibitivus* արգելական, որ միևնույն վերևի ձևերն են միայն բացասական. ինչպես՝ չգնաս. գողութուն չանես. չգնանք: Չըլնեն, չիմանամ թե այդ բանն անես: Չուենենալ ջեզ պես ընկերը:

4. Լատ. և հուն. *conj. dubitativus* կամ *deliberativus* երկբայական, որ գործ է ածվում անվրձ-ռականություն, վարանում ցույց տալու համար, իբրև երկբայական հարցում. ինչպես՝ գնա՞մ, թե չէ: Ի՞նչ անենք: Չիմի՞ էլ լռենք:- Բացասականը հաճախ ցույց է տալիս պարզապես ոչ ցանկություն, մի գուցե, չլինի թե բառերի երկբայական նշանակությամբ. ինչպես՝ Սուր չգժվի՞, գնա՛ Վաչեին մի վնաս տա:

Սեր այս եղանակն իր ցանկության խոսքի բնավորությունը պահում է և երկրորդական խոսքերի մեջ.

ա) Գրամայականով արտահայտված ուղղակի խոսքը երբ փոխվում է անուղղակի խոսքի, հրամայականը դառնում է ըղձական. ինչպես՝ Չիսուս ասաց իր աշակերտներին. «Գնացեք, քարոզեցեք հեթանոսներին»: Չիսուս ասաց իր աշակերտներին, որ գնան, քարոզեն հեթանոսներին:

Այսպես ըղձականով դրվում են ասել, պնդել, հայտնել, գրել և այլն բայերից հետո երկրորդական խոսքերը, երբ ինչպես մի ցանկացած նպատակ կախված է գլխավոր խոսքի ենթակայի կամքից. օրինակ՝ «ես ասացի, որ նա կգա», «ես ասացի, որ նա գա», առաջին խոսքի մեջ նրա գալ չգալն անկախ է իմ կամքից, բայց երկրորդի մեջ ես նրա գալը ցանկանում եմ: Այսպես ըղձականը գործ է ածվում և բազմաթիվ ցանկություն կամ ոչ ցանկություն ցույց տվող բայերից ու խոսքերից հետո, ինչպես են՝ ցանկանալ, խնդրել, հրամայել, վախենալ, ամաչել և այլն*:

Բացի այդ՝ ըղձականը գործ է ածվում նաև

բ) Իբրև նպատակի խոսք, որ ըմբռնվում է իբրև մի ցանկացած հետևանք (հունարենն պատճական ժամանակներից հետո ըղձական). գնացի, որ տեսնեմ նրան:

գ) Իբրև պայմանական խոսք, ինչպես և հունարենի ըղձականը.՝ Եթե այդ ասես, կսխալվես:

Պայմանական խոսքերի կարգին պատկանում են և գիջական խոսքերը, որոնք դրվում են հայ. և հուն. ըղձական (թեկուզ վատ՝ եղանակ էլ լինի, ես պիտի ծանապարհ ընկնեմ), ինչպես և գիջական-ընդհանրացական և անորոշ կրկնության պայմանական, ժամանակի և այլն խոսքերը, որոնց սկզբում հաճախ դրվում է կուզե բառը, որ կարող է չդրվել. ինչպես՝ «Ուրուրն ինչքան կուզե սպանե՛՛ հավը չի վերջանալ,- Ուրուրն ինչքան սպանե... Երբ էլ գալիր, կտեսնե՛իր»: Ցանկության պայմանական խոսք է նաև միայն, միայն թե բառերով սկսվածը... Միայն չհատնե՛ր խղճուկի հույսը:

դ) Իբրև ժամանակի խոսք մինչև բառի հետ, ինչպես և հունարենում: Մինչև Շուշանը զարդարվի, ժամը կարծակվի:

Թողնում ենք մեր այս եղանակի՝ գնամ, գնալի ձևերի մի քանի գործածությունները, որոնց մեջ ևս դրանք ցանկության խոսքեր են կազմում: Բերածներից արդեն պարզ է, որ մեր այս եղանակը համապատասխան է հունարենի և լատիներենի *conj. եղանակների*, երբ ցանկության խոսքեր են կազմում, և հունարենի ըղձական եղանակին, ի միջի այլոց հատկապես մի քանի կիրառությունների մեջ (ինչպես պայմանական խոսքի մեջ, մինչև բառից հետո), երբ ըստ երևույթին կարծես ցանկություն չէ արտահայտում:

Մենք ունինք ուրեմն երկու ցանկության խոսքեր կազմող եղանակ՝ հրամայական և ըղձական:

Արդարև մեր ցանկության երկրորդ եղանակն իր գործածությամբ մի տեսակ խառնուրդ է *conj.* և *opt.* եղանակների, այսինքն իր մեջ ունի մասամբ *conj.*-ի նշանակություն (առանձնապես իբրև *conj. deliberativus* գործածության մեջ), բայց մի անսովոր երևույթ չէ լեզուների մեջ, որ մի եղանակն երկու եղանակի խառնուրդից կազմված լինի: Գերման լեզուների մեջ, օրինակ, *conj.*-ի գործածությունները մեծ մասամբ անցել են *opt.*-ին, իսկ լատիներենի *conj.*-ը իբրև մի խառնուրդ ծագած է նախահնդեվրոպական *conj.*-ից և *opt.*-ից: Երկու եղանակի «այս խառնուրդը նրանից է առաջ գալիս, որ նրանց կիրառության շրջաններն իրար շոշափում են», երկուսն էլ գործ են ածվում իբրև հորդորական**:

Մյուս կողմից այս եղանակն իբրև ըղձական դնելու համար պետք է նկատի ունենալ նրա ծագումը: Շատ հնդեվրոպական լեզուների մեջ սկզբնական ըղձական անցյալի տեղ անցել է սահմ.

*) Վախենալ և այլն հայի, ինչպես և հույնի համար մի բացասական ցանկություն է. ուտիի հայերենում ըղձական է խնդրում, իսկ հունարենում ցանկության *conj.* կամ ըղձական:

**) Brugmann, *Kurze Vergl. Gramm. der indg. Sprachen.* Եր. 579-585:

անցյալը նոր կիրառությամբ. ուրիշ խոսքով սահմ. անցյալը դարձել է նաև ըղձական անցյալ, որին կից է նրա գործածությունն իբրև անիրական (irrealis), ինչպես՝ հունարենում praeteritum-ը (անցյալը), մի ըղձական մասնիկով՝ εἰ γὰρ, εἰθε (երանի՛, օ՛չ թէ): Հունարենում սահմանական անցել է ըղձականի տեղ. εἰθ ἔχομαι «երանի ունենայի» և γυνίος ἄν «կճանաչեիր» ձևերի փոխանակ անցել են անցյալ ժամանակը ոչ-երկրյանի ցույց տվող εἰθ εἶχον և εγνως ἄν: Ըղձական մասնիկով և ἄν-ով պահվում է խոսքի ըղձական բնավորությունը: Սրան էլ միանում է անցյալի գործածությունն իբրև անիրական նաև ներկայի համար, օրինակ՝ εἰθ εἶχες, ω τεχούσα, βελτίους φρένας «երանի, ով մայր, ավելի լավ սիրտ ունենայիր»*:

Այս գործածությունն իբրև ըղձական անցյալ ունի նաև գրաբարի անցյալ անկատարը մի ըղձական մասնիկով, ինչպես Օ՜չ թէ անսայիք փոքր մի., որ և, ինչպես հունարենի անցյալը (praeteritum), գործածվում է պայմանական խոսքերի մեջ իբրև անիրական, ինչպես՝ եթէ էր հաւատացեալ թագաւորի առաջի, փութայի և ոչ յապաղէի: Գրաբարի գնայի ձևի համար աշխարհաբարում պահված է ահա նրա այս գործածությունն իբրև ըղձական անցյալ, մինչդեռ նրա բուն նշանակությունն իբրև սահմ. անցյալ՝ (=գնում էի) չկա մեր նոր լեզվի մեջ: Աշխարհաբարի գնայի անցյալն ուրեմն ոչ թե ստորադասական անցյալ է, այլ ըղձական:

Սահմ. անցյալի այս իբրև ըղձական գործածվելու նմանությամբ համապատասխան սահմ. ներկան և ս գնամ (=գնում եմ) գործ է ածվել ըղձական նշանակությամբ: «Երանի թագաւորէիր» խոսքի նմանությամբ ասվել է և «երանի թագաւորես»: Նույն կերպ և պայմանական խոսքերի մեջ՝ «թէ միայն մերժեամք ի հանդերձս նորա, փրկիմ»: Եվ այս գործածությունն, ինչպես անցյալի, նույնպես և ներկայի համար այնքան ընդհանրացել է, որ սահմ. ներկայի ձևը՝ գնամ՝ այժմ միայն այս նոր նշանակությամբ է գործածվում:

Բացի այդ՝ պիտի դիտել և հետևյալը: Ըղձական եղանակը հնդեվրոպական լեզուների մեջ ունի երկու տարբեր նշանակություն.

1. Ցանկության ըղձական, որ ցույց է տալիս պարզապես գործողության ցանկություն, ինչպես αὐτίχα ε εἰνάτην «խկույն մեռնիմ», երկրորդ և երրորդ դեմքերի համար նաև ἵκνηիր, ἵնչպես՝ գիրքդ տա՛ն ինձ: Այս կարգի պատկանում է և ըղձականի գործածությունը պատվերների մեջ. հորդ ու մորդ պատվես, սուտ չխոսես:

2. Կարելիական ըղձական, որ ցույց է տալիս հնարավորություն, հակառակ սահմանականի, որ իրական գործողություն է ցույց տալիս: Այս նշանակությամբ ըղձականը գործ է ածվում և պայման ու գործողության անիրականություն արտահայտելու համար**։ Օրինակները ներքևում կտեսնենք. այստեղ միայն հետևյալը նկատենք: Կարելիական նշանակությունը մեր լեզուն նույնպես արտահայտում է ըղձականով, բայց մեր ըղձականը՝ գնամ, գնայի՝ այժմյան լեզվի մեջ հազվադեպ կգործածվի իբրև կարելիական ըղձական (potentialer opt.), ինչպես է գրաբարում և մասնավոր միջնադարյան ռամկորենում. դա այժմ սովորաբար ցանկության ըղձական է: Կարելիական նշանակություն արտահայտելու համար այժմ այս ըղձականի վրա դրվում է կը մասնիկը, ճիշտ ինչպես հունարենում կարելիական նշանակություն ցույց տալու համար ըղձական եղանակի (opt.) վրա դրվում է ἄν կամ κε մասնիկը, որով կազմվում է կարելիական եղանակ ասածը (modus potentialis): Բացի այդ՝ հունարենում նույն մասնիկը դրվելով անցյալի վրա (praeteritum), որ, ինչպես տեսանք, գործ է ածվում իբրև ըղձական անցյալ, տալիս է նրան կարելիական և անիրական նշանակություն (praeteritum des Modus potentialis և modus irrealis), - ճիշտ ինչպես մեր կը մասնիկը գնայի անցյալի վրա՝ կը գնայի:

Կը մասնիկով ըղձականը կազմում է ուրեմն կարելիական իմաստով դատողության խոսք:

Տեսնենք կը գնամ, կը գնայի ձևերի գործածությունները:

Կարելիական եղանակով, ինչպես տեսանք, եղելությունը պատկերացվում է ոչ իբրև իրական, այլ իբրև մտածված, կարծված, հնարավոր, այսինքն այնպիսի, որ կարող է լինել, գուցե կարելի է լինի: Ուստի այս եղանակով խոսողը ոչ թե ստույգ, հավաստի հաստատություն է անում, այլ անստույգ, մեղմ հաստատությամբ, քաղաքավարությամբ, ենթադրելով իր կարծիքն է հայտնում: Մեր կը մասնիկով կազմությունների այս նշանակությունը շատ պարզ երևում է, երբ հանդիպադրվում են սահմանական եղանակի համապատասխան ժամանակների: Առնենք նախ քաղադրյալ, ապա պարզ ժամանակները:

1. Սահմ. Այս ռուպեիս որ խոսում եմ, նա գնում է, - Երեկ, ժամի 5-ին նա գնում էր (իրական եղելություն). Ենթադր. Այս ռուպեիս որ խոսում եմ, նա գնալիս կը լինի (գնում կը լինի), - Երեկ, ժամի 5-ին նա գնալիս (գնում) կը լիներ (հնարավոր, կարծված եղելություն. կարող է, կարող էր գնալիս լինել): Շուտ գնա, մայրդ հիժմ տանը սպասում է քեզ, - Շուտ գնա՛, մայրդ հիժմ տանը քեզ սպասելիս կը լինի: Գնում, կանգնում ենք.. ամենքս մի ծառի տակ, ես ասում եմ՝ այ՝ ծառ քո անունը

*) Brugmann, նույն, եր. 586:

**) Brugmann, նույն, եր. 583, հս. A. Meise, Введение в сравнит. грамматику, 1911, եր. 186:

Գրիգոր է. դու էլ, իհարկե, ասում կը լինիս՝ Բաղալ է (Պռոշ.): Ընկերս պատմում էր, թե մի օր հիացմունքով էր մտածում այն ժամի ու վայրկյանի մասին, երբ մայրաքաղաքից հեռացած՝ գտնվում կը լիներ հայրենիքում (Սուրբացան):

2. Սահմ. Նա գնացել է Երևան,- Նա գնացել էր Երևան. Ենթադր. Նա գնացած կը լինի Երևան,- Նա գնացած կը լիներ Երևան: Լսած կը լինիս (սահմ. լսել ես). Ես գիտեմ, հաց էլ չես կերած լինիլ (սահմ. չես կերել). Քանի՞ անգամ դու ասած կը լինիս այս խոսքը (սահմ. ասել ես). Այս տեղը մի հարյուր անգամ տեսած կը լիներ (սահմ. տեսել էր. Պռոշ.):

3. Սահմ. Նա այժմ տանն է,- Երեկ, ժամը 5-ին նա տանն էր (իրապես է՛, է՛ր): Այժմ այնտեղ շատ մարդ կա, - Երեկ այնտեղ շատ մարդ կար (իրապես կա, կար): Ենթադր. Նա այժմ տանը կը լինի. Երեկ, ժամի 5-ին նա տանը կը լիներ, այժմ այնտեղ շատ մարդ կը լինի. Երեկ այնտեղ շատ կը լիներ (կարող է, կարող էր լինել, այդպես ենթադրում ենք միայն): Գեղումն է որտեղ կորած, մուրրած երեխայք կան, այսօր ժամումը կը լինին (սահմ. ժամումն են). Մին էլ (հանկարծ), կը լիներ կես գիշեր, որ... (կարող էր լինել. սահմ. կես գիշեր էր): Որ տասը բարեկամ ունինք (սահմ. իրապես ունինք), մի քսան էլ թշնամի կունենանք (կարող ենք ունենալ). Հոգեպահուստ բաներ կունենանք (սահմ. ունին): Ինչի՞ համար ես եկել այս կես գիշերին. ո՞վ գիտե ինչ փորագաղ կունենաս. խեղճ մայրդ ի՞նչ մեռալ տեղդ էլ կը գիտե՞մ (սահմ. գիտե՞. Պռ.):

Ինչպես վերևում դրված ձևերի մեջ, նույնպես և մյուս բայերի պարզ ձևերի մեջ կը մասնիկը դրվելով ըզծական եղանակի վրա տալիս է նրան կարելիական նշանակություն: Առենք նախ այնպիսի օրինակներ, որոնց մեջ կը գնամ ձևը ոչ թե ապառնիի նշանակություն ունի, այլ ներկայի, իսկ կը գնալի ձևը համապատասխան կերպով անցյալ է:

4. Սահմ. Շատ քիչ է պատահում աշխարհում այսպիսի բան (եղելությունն արտահայտում է իբրև իրական, ստույգ դատողություն): Ենթադր. Շատ քիչ կը պատահի աշխարհում այսպիսի բան (իբրև՝ շատ քիչ կարող է պատահել,- մեղմ հաստատություն): Նույն նշանակությունը մնում է և անցյալի համար՝ Շատ քիչ կը պատահեր այսպիսի բան (իբրև կարող էր պատահել): Չուկը ծովում կը մեծանա (կարող է մեծանալ): Ճակատի գրածը չի ջնջվիլ (չի կարող ջնջվել): Ուղտը գդալով կը ջրվի՞ (կարելի՞ է ջրել, կարո՞ղ է ջրվել): Ամեն բանում մեզ ոչով չի կարող հասնել. էջմիածնեցիք մեզ չեն հասնիլ (Պռ.- կարելի էր ասել՝ ամեն բանում մեզ ոչով չի հասնիլ. էջմիածնեցիք էլ մեզ չեն կարող հասնիլ): Մեծ տո՞ւն, կը տաներ (կը տանի) երկու հարյուր հոգի (Պռ. - իբրև կարող էր, կարող է տանել): Օրը քանի՞ անգամ է (էր) նա այստեղով գնում գալիս.- օրը մի հինգ անգամ կը գնա, կը գա, (կը գնար, կը գար): Հարագատ եղբայրը սիրելի բողջը գիր է սովորեցնում, կը մտածեր ամեն ստարդ աչք (Պռշ.): Ռ՞վ կը հանդգնի հրապարակ գալ.- Մենք ի՞նչ կը համարձակվենք բերան բանալ.- Ի՞նչպես կը հանդգներ մի ստորին ոստիկան ինքնագլուխ այդքան մեծ պահանջներ ա-նել, - ամեն գյուղում հո կաշառքով չէր հաջողիլ գործին վերջ տալ. կը պատահեր այնպիսի գյուղ, որ ուղղակի բառացի կը կատարեր նրա պատվերը.- Ռ՞վ կը կասկածեր, որ այդպես չի լինիլ (Պռ. իբրև ո՞վ կարող էր կասկածել):

Ես օրինակներ կուտակելն ավելորդ են համարում. այս կարգի գործածությունների մեջ կը մասնիկով կազմությունների կարելիական եղանակ լինելը շատ պարզ է: Միայն այս պիտի դիտել, որ եթե ներկան՝ կը գնամ և անցյալը կը գնալի կարելիական նշանակություն ունին, նույն նշանակությունը պահում է կը գնամ ձևն և այն ժամանակ, երբ իբրև ապառնի է գործածվում: Օրինակ՝ եթե «Կողպատողները շատ հեռու էին, նրանց ետևից կը հասներ միայն հրացանի գնդակը» ասացվածի մեջ կը հասներ ենթադրական է, իբրև՝ կարող էր հասնել, նույն նշանակությունն անշուշտ մնում է, երբ ասվում է՝ «Կողպատողները շատ հեռու են, նրանց ետևից կը հասնի միայն հրացանի գնդակը», իբրև՝ կարող է հասնել:

Այս բոլոր դեպքերում մեր ըզծական եղանակը կը մասնիկով համապատասխան է հունարենի ըզծական եղանակի ու Praeteritum-ի. ձև մասնիկով գործածություններին իբրև modus potentialis կարելիական եղանակ, որ ուսերենն արտահայտում է μόυ, εμαυ բայերով կամ ապառնի ժամանակով μοχουε θυμ, ποχαλυ բառերով: Նոր օրինակներ բերելուց խուսափում են արտաքին անհարմարությունների պատճառով: Միայն պետք է նկատել, որ հայերենում ևս, ինչպես հունարենում ըզծական ձև մասնիկով, այս կարելիական եղանակը հաճախ գործ է ածվում քաղաքավարական արտահայտության համար, թե՛ մի եղելություն հայտնելու և թե՛ հրամայելու համար. օրինակ՝ Սաացեք, խնդրեմ, այս ի՞նչ կը նշանակե: Ինչպես կը հիշեն ընթերցողները, որոշված էր... Այդ կարծիքի դեմ մենք կը նկատենք, որ Գու այդ բանը կանես:

Անցնենք մեր այս ձևերի գործածությամբ պայմանական խոսքերի մեջ:

1. Պայմանը և հետևությունը կարող են պատկերացվել լոկ իբրև հնարավոր, կարելի. այս դեպքում լատիներենում թե գլխավոր և թե երկրորդական խոսքերի մեջ դրվում է conj. potentialis. հայերենում սույն գործածությունն ունի մեր ենթադրականը: Si hos dicas (dixeris), erres (erraveris) եթե դու այդ կասես, կը սխալվես: Եթե կը կամենաք, երկու ժամի մեջ բոլորիկ ինձ նման որսկաններ կը շինեն.- Եթե իմ ձեզ ավանդած դասը դուք կը տաք. ձեր եղբայրներին, ոչ թե հինգը,

տասն անգամ հինգն էլ չեն վստահանալ ձեր գլուղին մոտ գալ (Պոռշ.): Գունարենում այսպիսի խոսքերի հետևությունը դրվում է *modus potentialis*, այսինքն ըզձական և՛ մասնիկով, ինչպես հայերենում ըզձական կը մասնիկով, իսկ պայմանը դրվում է *coni.*, կամ ըզձական առանց և՛ մասնիկի, ինչպես սովորաբար և հայերենում (եթե այդ ասես, կը սխալվես):

2. Պայմանը և հետևությունը կարող են պատկերացվել իբրև ոչ-իրական: Այս դեպքում թե պայմանը և թե նրա հետևությունը դրվում են անցյալ. եթե նա ժամանակ ունենար, գիրք կը կարդար (բայց որովհետև չունեի, չկարդաց): Այսպիսի գործածության մեջ կը կարդա՞ի անցյալը համապատասխանում է լատիներենի *coni. irrealis*-ին և հունարենի *praeteritum* -ին և՛ մասնիկով, որ գործ է ածվում իբրև *modus potentialis* կարելիական, այս դեպքում իբրև *irrealis* անիրական:

Սակայն ինչպես առաջին դեպքում եթե նա ժամանակ ունենա, գիրք կը կարդա, նույնպես և այս երկրորդ դեպքում եթե նա ժամանակ ունենար, գիրք կը կարդար- պայմանն ու հետևությունը միասին կազմում են մի ենթադրական զողված կամ խոսքերի ենթադրական կապակցություն (*hypothetische Satzgefüge*), որի մեջ գլխավոր խոսքի իմաստը երկրորդական խոսքով պայմանի տակ է դրվում կամ ասվում է որոշ ենթադրությամբ (*սոսթեսիս, Annahme, Voraussetzung, Bedingung*): Առաջին խոսքի մեջ՝ եթե նա ժամանակ ունենա, գիրք կը կարդա՞ պայմանն ու հետևությունը պատկերացվում են իբրև հնարավոր, կարելի ենթադրություն, և որովհետև ենթադրությունը լինում է ապագայի համար, ուստի որոշ պարագաների հիման վրա սպասել կարելի է, որ կատարվի: Իսկ երկրորդ խոսքի մեջ՝ եթե նա ժամանակ ունենար, գիրք կը կարդար- պայմանն ու հետևությունը պատկերացվում են իբրև անիրական, լուկ ենթադրություն, որով հետև ենթադրությունը լինում է մի անցյալի ժամանակի համար, իսկ անցյալ ժամանակի համար այլևս կարելի չէ սպասել, որ մի չկատարված պայման իրագործվի: Կը կարդա և կը կարդար ձևերն ուրեմն այս պայմանական գործածությունների մեջ եթե տարբերվում են նշանակությամբ, այդ ոչ թե իրենց տարբեր եղանակից է առաջանում, այլ իրենց ժամանակից, ապառնի և անցյալ լինելուց: Այս պատճառով անցյալ ժամանակն է գործածվում նաև խոսքերի այնպիսի պայմանական կապակցության մեջ, երբ պայմանն ու հետևությունը, թեպետ ապագայում ընկնելով հնարավոր են, բայց ոչ սպասելի, ինչպես՝ եթե կարողանայի, ես վաղը ժամի 5-ին ճանապարհ կընկնեի: Դա լուկ ցանկացած ենթադրություն է ապագայի համար. խոսողն առաջուց գիտե, որ դժվար թե պայմանն իրագործվի, բայց և ով գիտե, գուցե իրագործվի:

Կը գնամ ձևն իբրև ապառնի՞ իր այս կարելիական կամ ենթադրական նշանակությունը պահում է և՛ այն ժամանակ, երբ առանց պայմանի է գործածվում: «Եթե վաղը լավ եղանակ լինի, կը զնամք գրեսնելու»։ «Վաղը կը գնամք գրեսնելու»։ Այս երկրորդ խոսքն իր եղանակավորությամբ չէ որ տարբերվում է առաջին խոսքից, այլ միայն նրանով, որ մինչ առաջին խոսքի մեջ գնալու ապագա գործողությունը, ինչպես տեսանք, հնարավոր. ուստի և սպասելի է, միայն որոշ, հայտնի պայմանով, երկրորդ խոսքի մեջ նույն գործողությունը դարձյալ հնարավոր ու սպասելի է, բայց լուկ, առանց որևէ պայմանի: Անշուշտ սրա հնարավորությունն ևս այս կամ այն պայմանից է կախված, բայց այդ պայմանները առանց հայտնվելու են թողած:

Թե «վաղը կը գնամք գրեսնելու» խոսքը մի հնարավոր, ենթադրական և ոչ իրական գործողություն է ցույց տալիս, այդ շատ պարզ կերևի, երբ այդ ձևը հանդիպարովի նույն բայի սահմանական ապառնի ժամանակին «Մենք վաղը գնալու ենք գրեսնելու»։ Մեկին զգուշացնելիս ասում ենք՝ «Ճանապարհը վատ է, զգուշ գնա, կընկնես», և ոչ թե «զգուշ գնա, ընկնելու ես»։ որովհետև վերջին ձևով գործողությունը մտածվում է իբրև հավաստի, ստույգ, իրական, ուստի և, եթե մեկն ընկնելու է, այլևս զգուշացնելն ավելորդ է. մինչդեռ կընկնես ձևով գործողությունը մտածում ենք իբրև հնարավոր, սպասելի որոշ հանգամանքների ու դրության մեջ, որով և զգուշացնելը շատ բնական ենք գտնում. «Ճանապարհը վատ է, զգուշ գնա, կընկնես» խոսքով ուզում ենք ասել, թե կարող է պատահել, որ ընկնես: Դա մի տեսակ զեղչված ենթադրությամբ խոսք է, զգուշ գնա [ապա թե ոչ, եթե զգուշ չգնա], կընկնես: Բռնիր, չես տեսնում, որ ուշագնաց մարում է. հիմի կընկնի (Պոռշ.): իբր՝ եթե չբռնես՝ հիմի կընկնի:

Նույնպիսի եղանակավորության խոշոր տարբերություն կա և հետևյալ ապառնիների մեջ, որոնցից մեկը կարելիական կամ ենթադրական է, մյուսն իրական. Այդ բանը վերջը կը պարզվի (կարող է պարզվել)։ Այդ բանը վերջը պարզվելու է [իրական]։ Այսօր մեզ մոտ հյուրեր կը գան (կարող են գալ, կարելի է գան)։ Այսօր մեզ մոտ հյուրեր են գալու (իրական գալու են, մտադիր են գալու)։ Ես վաղը կը գնամ նրա մոտ (կարելի է գնամ)։ Ես վաղը գնալու եմ նրա մոտ (իրական, մտադիր են գնալու)։ Տե՛սնեն՝ երեսս կը բռնի՞, որ ասեն։ Այսպես անելով ամենցի աչքից էլ կընկնես*։

** Ամեն ապագայում ընկնող գործողություն ըստ ինքյան անհաստատ, անստույգ է, որով և մենք կարիք չենք զգուշ շատ անգամ ապագայում ընկնելու մի իրական գործողություն, այլ ավելի պետք ունիք մի ապագա գործողություն ենթադրելու կամ անհրաժեշտ համարելու. ուստի այդպիսի գործողությունն արտահայտվում է ավելի հարկադրական (պիտի գնամ) և ենթադրական (կը գնամ) եղանակներով, քան սահմանականով (զնալու եմ)։ Ապագայի նկատմամբ սակայն մենք կարող ենք միշտ մի իրական միտք, դիտավորություն ունենալ մի բան անելու. հենց այդ պատճառով մեր սահմանական ապառնի (զնալու եմ), որ ցույց է տալիս ներկայի նկատմամբ ապագայում ընկնող մի իրական գործողություն, միաժամանակ ցույց է տալիս և մի ներկայի հարաձիգ,*

Չունարենի անցյալը (praeter.) ունի և մի երկրորդական գործածություն ևս. այն է՝ բացի կարելիական և անիրական (potential և irrealis) նշանակությունից, գործ է ածվում նաև անորոշ կրկնություն ցույց տալու համար խոսքերի ժամանակական և պայմանական կապակցության մեջ. գլխավոր խոսքի մեջ անցյալն այս դեպքում դրվում է շատ անգամ av մասնիկով (praeter. des Judicatives von unbestimmter Wiederholung): Արա համապատասխան գործածությունը կա և հայերենում. ինչպես՝ երբ էլ գնալիք քաղաք, կը տեսնեիր նրան հրապարակում (փոխանակ ասելու՝ երբ էլ գնում էիր, տեսնում էիր): Այս գործածությունը արևելյան աշխարհաբարում, ավելի ժողովրդական ձևով, կա իբրև պատմական ժամանակ ևս անորոշ, կրկնություն ցույց տալու համար: Բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել Սուրաբանի, Բաֆֆու և մանավանդ Պոռչյանի և ուրիշների երկերի մեջ. օրինակ՝ բայց այդպես չէր հանգուցյալ հայրը. ամեն տարի աշնան ժամանակը կը գար: Մենք առաջուց կը լվանալիքը, կը մաքրեինք ոչխարները և սպիտակ, ծյունափայլ հոտերը կը հանեինք նրա առաջ և այլն (Բաֆֆի, Սամվել):

Այս ենթադրական կամ կարելիական նշանակությունը պահում են կը գնամ, կը գնալի ձևերը, երբ գործ են ածվում և իբրև երկրորդական խոսք. ինչպես՝ ես այն պատճառով չեմ ասում քեզ, որովհետև կարծում եմ, թե կը գնաս, նրան կը հայտնես (և դու կարելի է գնաս, հայտնես): Ես այս պատճառով չասացի քեզ, որովհետև կարծում էի, թե կը գնալի, նրան կը հայտնեիր: Այս երկու ձևերը, ինչպես բերած օրինակներից երևում է, կատարելապես նույն եղանակավորություն ունին: Առաջինը մի հնարավոր ապառնի, իսկ մյուսը՝ կը գնալի մի նույնպիսի անցյալ է, բայց գլխավոր խոսքի (կարծում էի) ժամանակի նկատմամբ դա ևս մի նույնպիսի հնարավոր ապառնի է: Այս պատճառով ենթադրական անցյալի տեղ մեր լեզվի մեջ հաճախ բանում է ենթադրական ապառնին. խոսողն այդ ժամանակ ինքն իրեն դնում է գլխավոր խոսքի ժամանակի մեջ. ինչպես՝ ես կարծում էի, թե մայրս կը բարկանա (փոխանակ՝ կը բարկանար). Արքահամ աղան կարծեց, թե ճաշին կը գամ, ճաշին էլ չեկան (Պոռչ): Չեղացավ խոստանալով զալ աղայի կոչին, երբ սա կը հրամայե (Սուր.). Ամեն մարդ ընդհանուր խռովության մեջ սպասում էր, երբ թշնամին հեղձողի նման ներս կը թափվեր և սուրը ձեռին կը հանդիպեին իրենց պատվավոր վախճանին (Բաֆֆի):

Այսպես մեր կը գնամ և կը գնալի ձևերն, ինչպես իրենց կազմությամբ իրարուց անբաժան են, նույնպես և իրենց եղանակավորությամբ: Դրանք ըզծական են կարելիական նշանակությամբ գործածված, իսկ եթե իբրև առանձին եղանակ առնվին modus potentialis կարելիական եղանակ են, որ ես ավելի հարմար եմ համարում ենթադրական կոչել, որովհետև մեր այս բառն իր սովորական գործածությամբ թե՛ կարելիական նշանակությանն է հարմարվում և թե՛ այդ ձևերի պայմանական գործածությամբ. լինին կարելիական նշանակությամբ, թե անիրական (irrealis). մի դեպքում հնարավոր ենթադրություն, մյուս դեպքում լուկ ենթադրություն*:

Մի անգամ որ մեր պիտի բառով և կը մասնիկով կազմված ձևերը սահմանական եղանակից դուրս գալով՝ առնվում են իբրև առանձին առանձին եղանակներ, ըստ ինքյան հասկանալի է, որ մեր խոնարհման դժվարությունը որոշ չափով վերանում է: Բավական է սովորել միայն ըզծականի ութ ձևերը՝ գնամ, գնալի. գնացած լինիմ, գնացած լինեի. գնալիս լինիմ, գնալիս լինեի. գնալու լինիմ, գնալու լինեի: Չարկադրականի և ենթադրականի ութ ութ ձևերը առանձին առանձին սովորելու կարիք չկա, այլ այն միայն պետք է իմանալ, որ պիտի բառը և կը մասնիկը դրվելով ըզծականի վրա՝ կազմում են հարկադրականի և ենթադրականի ութ ութ ձևերը, որոնք համապատասխան են ըզծականի ութ ձևերին. պիտի գնամ, պիտի գնալի. գնացած պիտի լինիմ, գնացած պիտի լինեի և այլն. կը գնամ, կը գնալի. գնացած կը լինիմ, գնացած կը լինեի. գնալիս կը լինիմ, գնալիս կը լինեի և այլն:

Ամբողջ տասնվեց ձևի նշանակության համար, ըստ եղանակի, բավական է ուրեմն իմանալ միայն երկու տերմին՝ հարկադրական և ենթադրական. իսկ դրանց կազմության համար՝ միայն պիտի բառը և կը մասնիկը: Եթե աշակերտն, օրինակ, գիտե, որ գնալիս լինեի կատարվող կերպի ըզծական անցյալ է, նա ինքն արդեն կարող է կազմել և իմանալ որ գնալիս կը լինեի կատարվող կերպի ենթադրական անցյալ է. իսկ գնալիս պիտի լինեի կատարվող կերպի հարկադրական անցյալ է:

Սակայն այդպես վարվելու էլ կարիք չկա. կարելի է պիտի գնամ, պիտի գնալի և կը գնամ, կը գնալի ձևերը նույնիսկ չառնել խոնարհման մեջ, այլ միայն գնամ, գնալի ձևերը: Եվ այս կլինեն

տևական վիճակ, դրություն կամ մտադրություն ապագայում մի գործողություն կատարելու. և այս սահմանական ապառնի ժամանակի իրականությունն առնվում է ոչ թե ապագայի գործողության համար, որ ըստ ինքյան անստույգ է. այլ ներկայի հարածիզ վիճակի կամ մտադրության համար, որ և արտահայտվում է եմ բայով, որ սահմանական է:

**) Մի նկարագրություն սակայն պիտի անել: Ինչպես սահմանական եղանակի համար վերևում տեսանք, որ մի որևէ բառով կարող է ստանալ հարկադրական կամ կարելիական նշանակություն (նա զուցե գալիս է), նույնպես և այս ենթադրական եղանակը կարող է որևէ բառով հարկադրական նշանակություն ստանալ, ինչպես նա անպատճառ կը գա, նա անհրաժեշտորեն կը գա: Խոսքն այս դեպքում տրամաբանորեն հարկադրական է, թեպետ և ձևով ենթադրական է:*

ավելի բանավոր, որովհետև քերականորեն բառածևի գաղափարը պահանջում է, որ իբրև բայի ձևեր վերցվեն միայն պարզ ժամանակները: Իսկ թե այդ բառածևերը որևէ եղանակիչ բառով կամ մասնիկով նոր եղանակավորություն են առնում, դա բառածևի հետ առնչություն չունի: Եթե «գուցե գա», «թերևս գա» կապակցությունների մեջ գալ բայի եղանակն, ըստ ձևի, փոխված չի համարվում գուցե, թերևս բառերի պատճառով, թեպետև սրանք բային տալիս են կարելիական նշանակություն, - նույնը պիտի ասել և «պիտի գա», «կը գա» կապակցությունների համար: Գալ բայն այս դեպքում ևս իր ձևով մնում է նույն ըղծականը, միայն պիտի, կը բառը կամ մասնիկը տալիս են նրան հարկադրական կամ կարելիական բնավորություն: Տեսնենք այս եղանակիչ պիտի բառն և կը մասնիկն առանձին առանձին:

Պիտի եղանակիչը պարզաբար պիտիմ բայի եզակի 3-րդ դեմքն է և մենակ իբրև անկախ բայ էլ է գործածվում ինչպես Ասողին էլ լսող պիտի. Այսօր պիտի գնալ և տեսնել նրան: Դա նշանակում է հարակավոր է, պետք է. ուստի պիտի գնամ, պիտի գնաս և այլն կապակցությունների տեղ և նրանց նշանակությամբ գործ են ածվում նաև՝ պետք է գնամ, պետք է գնաս և այլն: Պիտի գնամ և այլն ձևերը ծագած են պիտի որ գնամ և այլն ձևերից: Այսպես գործ է ածվում հաճախ միջնադարյան աշխարհաբարում: Դրանից սղունով առաջացել է բարբառային պիտ' որ գնամ, պիտ' որ գնաս և այլն, կամ, ինչպես սովորական է ժողովրդական լեզվի մեջ երկրորդական խոսքն առանց որ շարկապի դնել՝ պիտի գնամ, և վերջապես շրջումով կամ բառերի ազատ դասավորությամբ՝ Ես այսօր տուն պիտի գնամ. Ես այսօր պիտի տուն գնամ. Ես պիտի այսօր տուն գնամ և այլն:

Սակայն ինչքան էլ պիտի գնամ ձևը սկզբնապես նույն է պիտի որ գնամ ձևի հետ, այժմյան լեզվի մեջ այդ երկուսի տարբերությունը խոշոր է: Երկրորդ ձևի մեջ պիտի անկախ բայ է և քերականորեն գերադաս բայն է, իսկ գնամ նրա լրացումը. մինչ առաջին խոսքի մեջ պիտի բառը կորցրել է անկախ բայի նույնիսկ բայական նշանակությունը. «Ես այսօր երեկոյան քաղաք պիտի գնամ» խոսքի և նմանների մեջ այլևս «ես այսօր երեկոյան» մասը չենք գիտակցում իբրև լրացում եզակի 3-րդ դեմքի պիտի բայի, իբրև՝ պիտի որ ես այսօր երեկոյան քաղաք գնամ: Մյուս կողմից պիտի գնամ ձևի մեջ պիտի բառը չի պահում իր բուն նշանակությունը, որ է հարկավոր է. Ես պիտի տուն գնամ խոսքը այլևս չենք մտածում իբրև՝ հարկավոր է որ ևս տուն գնամ, ինչպես որ հասկանում ենք հետևյալ խոսքերը՝ Պիտի որ մինդ այս խաչը հանեք. Պիտի որ ինչ հունար ունենա՞ չպահի. Պետք է որ մի քանի բարեկամներ օգնական լինիք (Պոռշ.): Վերջին խոսքերի մեջ շեշտվում է հարկավոր, պետք լինելը, ուստի և անցյալը լինում է պետք էր (պիտեր). օրինակ՝ Պետք չէ՞ր որ մեր միրքի տակովն էլ անցնեիք (Պոռշ.). մինչդեռ պիտի գնամ կապակցությունը ցույց է տալիս անհրաժեշտ, հարկադրական գործողություն և պիտի բառը դարձել է բայի մակբայական լրացում, որ դրվելով բայի վրա՝ միայն եղանակավորում է այն, գործողությանը տալով հարկադրական նշանակություն: Այս պատճառով և պիտի բառը ոչ միայն բայից առաջ է դրվում, այլ երբեմն և հետո՝ գնամ պիտի, գնաս պիտի, - և նույնիսկ սղվում է և ստանում է պիտ, բարբառներում նաև տի, տը, տ' ձևերը, ինչպես՝ Մարդ մի անգամ պիտ մեռնի. (տի բերեմ, տը բերեմ, տ' ասեմ),- մի շրջում և սղում, որ չէր կարող տեղի ունենալ, եթե պիտի բառը պահած լիներ իր անկախ բայական նշանակությունը:

Այսպես ուրեմն այսօրվա լեզվի՝ պիտի գնամ, պիտի գնալի ձևերի մեջ պիտի բառը մի քաղաքած բայական ձև է, միշտ ինչպես գուցե բառը: Այս դեպքում, հասկանալի է, ինչպես գուցե դրվում է մակբայների մեջ, նույնպես և այս պիտի բառը պիտի դրվեր:

Պիտի բառը մակբայ դնելուն չի խանգարում այն, որ պիտի գնամ կազմության բացասականը լինում է թե՛ պիտի չը գնամ և թե՛ չը պիտի գնամ, այսինքն բացասականը կարող է թե խոնարհվող բայի վրա դրվել և թե՛ պիտի հարկադրականի վրա: Եվ այս հասկանալի է, թե ինչու: Պիտին ծագած լինելով բայից, ընդունում է չը բացասականը, ինչպես և նույն կարգի գուցե բառը. «Գուցե գնամ» կապակցության բացասականը, լինում է թե՛ գուցե չգնամ, թե՛ մի՛ գուցե գնամ: Անշուշտ իմաստով այս կրկին բացասական ձևերը տարբեր են. պիտի չգնալի ձևի մեջ բացասվում է ինքը գործողությունը և առնվում է բացասական գործողության անհրաժեշտությունը. մինչ չպիտի գնալի մեջ ոչ թե անմիջապես գործողությունն է բացասվում, այլ գործողության անհրաժեշտությունը: Ամանապես և գուցե չգնա խոսքի մեջ առնվում է մի բացասական գործողության հնարավորությունը, մինչ մի՛ գուցե գնա ձևի մեջ անմիջապես գործողությունը չի բացասվում, այլ գործողության եղանակիչ գուցե բառի նշանակությունը, այն տարբերությամբ պիտի բառից, որ վերջինս սահմանականից ծագած լինելով դատողության խոսքի չը բացասականն է առնում, մինչդեռ գուցե բառը, ծագած լինելով գրաբարի ցանկության եղանակից, մի՛ արգելականն է առնում. որով մի՛ գուցե գնա խոսքը ոչ թե ըղձականի կարելիական նշանակությամբ է առնվում, այլ ցանկության նշանակությամբ. խոսքը չի ցանկանում նրա գալը:

Այն անգամ որ պիտի բառը դրվեր իբրև առանձին եղանակիչ բառ կամ մասնիկ, այն ժամանակ խոնարհման միջից դուրս կծգվեին պիտի գնամ, պիտի գնալի կազմությունները և բավական կլիներ միայն բացատրել, թե ըղձականի վրա ավելանալով պիտի, պիտ բառը կամ մասնիկը, բային տալիս է հարկադրական եղանակի նշանակություն, ինչպես և գուցե բառը՝ կարելիական նշանակություն. Գնամ, տեսնեմ (ցանկության իմաստով), պիտի գնամ տեսնեմ (հարկադրական), գուցե գնամ, տեսնեմ (կարելիական). Երեք դեպքերում էլ, սակայն, բայն իր քերականական բառածևով նույնն է, ըղձական է:

Ես այսօր կարելի է ասել և կը մասնիկի և կը գնամ, կը գնալի ձևերի համար:

Այս մասնիկի ծագումն Այտնյանը (Քեր. եր. 76 հտ.) բացատրում է կայ ու բառերից, որոնք իբրև ավելադրություն դրվելով գրաբարի սահմ. ներկայի և անցյալի վրա, որ արդեն ստորադասականի նշանակություն էին ստացել, բային տվել են սահմանականի բնավորություն. կայ ու տեսանէ (որ հետո դարձել է կու տեսանէ, կը տեսանէ) միայն սահմանական կարող էր հասկացվել, քանի որ կայ բայը միայն սահմանական է: Այս բացատրությունը, ինչքան սրածիտ է, սակայն չի հաստատվում. մի երկու օրինակները, որ նա բերում է գրաբարից, բավական չեն: Այսպիսի մի գործածություն, որ այժմ ընդհանրացած է լեզվի մեջ, չէր կարող լեզվից բոլորովին վերացած լինել. եթե մի ժամանակ ասվել է կամ ու լսեմ, կաս ու լսեմ, կայ ու լսե, կանք ու լսեմք, կաք ու լսեք, կան ու լսեմ. կայի ու լսեի, կայի ու լսեիր և այլն, այսինքն կամ բայն ևս խոնարհվել է լսեմ բայի հետ, դրա հետքերն այժմյան բարբառների մեջ եթե չերևային, միջնադարյան աշխարհաբարում զոնե պիտի երևային. բայց այնտեղ ևս այն մի երկու կապակցություններն են միայն երևում, որ և բերել է Այտնյանը. այնպես որ պետք է կարծել, որ Մխիթար Չերացու «կանք ու տեսանեմք», «կայ և ուրդի» գործածությունները բացառիկ դարձվածներ են, ինչպես և՛ կայ մնայ, կայ պահի կապակցությունները:

Կը մասնիկը, որ երևում է նաև կո, կու, կա, կի ձևերով, այժմ դրվում է բայից առաջ և նրանից անբաժան. բայց բարբառներում երբեմն անջատվում էլ է բայից՝ կը վեր ընկնի, կը ցույց տա: Ուրիշ բարբառներում դրվում է բայի ետևից՝ պահեմ կը, ասեմ կը. նույնիսկ մի անգամ մի քանի բայի ետևից՝ եղիան նստի, համբառաւ կը երկինք: Երբեմն կրկնությամբ էլ է ասվում՝ կը պահեմ կը, կուտէ կը: Միջնադարյան աշխարհաբարում երևան է գալիս նաև կոյ ձևով, (վերջի յ-ն, երևի, ավելացած է միայն գրության ձևով) և բավական էր համարվում մի անգամ միայն զնել մի քանի բայերից առաջինի վրա. ինչպես՝ Թագաւորին փեսայն բշչկութիւն կոյ առնէ և դևս հանէ (Մատ. ժողով, Առակաց. Բ. 135) ինչպես այժմ պիտի եղանակիչը՝ պիտի գնամ, տեսնեմ նրան:

Այս մասնիկը, ինչպես տեսանք, դրվելով ըղծականի վրա՝ արևելյան աշխարհաբարում ճիշտ նույն կարելիական նշանակությունն է տալիս բային, ինչ որ հունարենի օն մասնիկը, որին գործածությամբ հավասար է *κέ, κέν, κά* մասնիկը: Հունարենում օն կամ *κε* մասնիկը դրվում է անմիջապես բայից հետո, բայց երբ բայից առաջ կա մի կարևոր բառ, ինչպես մի բացասություն կամ հարցական, դրվում է բայից առաջ. երբեմն նաև կրկնված ձևով է գործածվում:

Հունարենի *κε* մասնիկը հնդկարական ծագում ունի. Բրուգմանի Համառոտ. համեմատ. քերականության մեջ՝ գտնում ենք այդ մասին. «*qom *qoq *qā և այլն. հին հնդ. *kām kam*, հուն. *κε, κεν, κα*. հին եկ. *սլավ. кь, нолу.-ко.-ка*». իսկ գործածության համար ի միջի այլոց «հին հնդկերենում դրվում է հրամայականի ետևից, ինչպես և ոուսերենում (*скажу-ка*). Հին հնդկերենում նաև սահմանական գլխավոր խոսքերի մեջ: Սրան մոտիկ են և հունարենի մասնիկները (*κε, κεν*) կարելիական ըղծականի հետ» (opt. patent.):

Արդ մեր կը մասնիկը, - որ անշեշտ մնալով սղված է կո, կու, կի, կա ձևերից, ինչպես երևում է այդ մասնիկը մեր բարբառներում, - թե նշանակությամբ և թե հնչյունով նույնանում է *qom, *qom, qā մասնիկի հետ, այսինքն թե գործածությամբ և նշանակությամբ և թե ծագումով նույն է ինչ որ հունարենի *κε* մասնիկը: Դրանով ըղծական եղանակը՝ գնամ, տեսնեմ՝ դառնում է կարելիական ըղծական կը գնամ, կը տեսնեմ*:

Ա. С. Маркрян — Ценное исследование наклонений глагола. — Автор представляет теорию наклонений глагола, разработанную выдающимся армяноведом М. Абегианом в 1912 г. в статье «Наклонения глагола в восточноармянском ашхарабаре». Статья вновь публикуется в связи с 135-летием со дня рождения Абегиана.

*Brugmann, K. *vergl. Gramm.* 629:

Կը եղանակիչի ծագման մասին, սակայն, ոչ միայն Ա. Այտնյանի, այլև Մ. Արեղյանի հայտնած տեսակետը լեզվական փաստերով չի հաստատվում: Այդ մասին տես մեր «Կը եղանակիչի ծագման մասին» հոդվածը (ՊԲՀ, 1961, նո. 1, էջ 158-179), «Հայերենի հարադիր բայերը», Երևան, 1996, էջ 365-393, այլև՝ Յ. А. Макаев, *Общая теория сравнительного языкознания*, М., 1977, с. 148-154 (Ալ. Ա.):